

# ԵՂՈՒ ՔՈՌ ԲԱԽՏԸ

## I

«Հայր սուրբ ջան, աջիդ ղուրբան, մի օգնութիւն արտ ինձ. միայն երկու ոռւբլի է պէտք, որ մեր գիւղ հասնեմ»:

Այս խօսքերով եկեղեցու բակում գիմեց վարդապետին մի երթասարդ գիւղացի, աջ թեւը կապած, հէնց այն ըսպէին, երբ վարդապետը կամենում էր եկեղեցի մտնել: Գիւղացու մեծ, մորթէ փափախը, տրեխները, պատուած չուխան և ցաւոտ գէմքն ակամայ դրաւեցին վարդապետի և փոքրաթիւ ժամաւորների ուշադրութիւնը: Պարզ էր, որ նա նոր էր եկեղեցու և շըջապատող փարթամութեան մէջ իր փափախով և տրեխներով մի տարօրինակ հակապատկեր էր ներկայացնում:

—Ո՞րտեղացի ես, այ տղա, հարցրեց վարդապետը:

—Ծառայ եմ, ապարանցի եմ, Սաքոյի Եղօն եմ. երկու շաբաթ կայ, եկել եմ Բագու, հիմա երկու մանէթ է պէտք, որ յետ գնամ գիւղ, մեր տուն:

Եւ գիւղացին նորից իր աղերսալի նայուածքը յառեց վարդապետի վրայ:

Նրա արեւակէղ, փոշոտ գէմքը թախիծ, վիշտ էր արտայայտում, բայց ոչ տրոտոնջ, ոչ յուսահատութիւն. առաջին ակնարկից կարելի էր համոզուել, որ ձեր աշոկումը, 1902.

ռաջ՝ կանգնած է մի միամիտ գեղջուկ, որի նահապետական պարզութիւնն ու անմեղութիւնը գեռ չէին խախտուել ապականուած բաղարի նեխուած բարոյական մժնոլորտում։ Այդտեղ, այս, կար վիշտ, բայց միենոյն ժամանակ այդ վիշտը անմոռնչ տանելու վըճռական համբերութիւն։

—Ե, լաւ, եթէ երկու շաբաթ է միայն, որ եկել ես այստեղ, էլ ինչո՞ւ ես այդպէս շուտ յետ գնում. ինչի՞ համար էիր եկել. —Խսուութեամբ հարցրեց հայր սուրբը։

—Ծառայ եմ, եկել էի բախտս փորձեմ։

—Փորձեցիր միթէ և ինչպէս։

—Բախտս բոռ դուրս եկաւ, Ասառուած չուզեց, օրհնեալ լինի նրա կամքը. երեւի ճակատիս այդպէս էր գրուած... ինչ անենք. Աստծու հետ հօ կոռուել չէ կարելի. աղառում եմ, երկու մանէթ չնորհիլ, դառնամ մեր գիւղ։

—Երկու մանէթ, ինչո՞ւ անպատճառ երկու, միթէ այս մեծ բաղաքում չը կարողացար երկու մանէթ հաւաքել։

—Ես այստեղ ոչ ոքի չեմ ճանաչում, հայր սուրբ, մեր գիւղից մարդիկ կան, բայց նրանց տեղը չը գիտեմ. ինչ անէի, ողորմութիւն հաւաքէի. դուք մեր հայրն էք, դուք տուէք. աման, հայր սուրբ, մի ինայիր երկու մանէթը, տուր գնամ։

—Ախր երկու մանէթով ինչպէս կը գնաս Ապարան, այ տղայ, աւելի մեղմ և կարեկցական ձայնով ասաց վարդապետը։

—Ծառայ եմ աջիդ, հայր սուրբ. չորս մանէթ տուել է ինձ զավօդի տէրը. երկու մանէթ էլ պէտք է, որ այստեղից Աղստաֆա գնամ երկաթուղով։

—Իսկ այնտեղից ինչ պէտք է անես։

—Աղստաֆից ոորզով կը գնամ մինչեւ մեր գիւղ։ Այդ միջոցին եկեղեցին օրհնելու երրորդը հնչեց.

վարդապետը շտապով ներս մտաւ ասելով. «Լաւ, սպասիր այս գիշեր, վազը կը կարդադրենք»։

\* \*

Երեկոյ է, մութը կոխել է. երկնակամարի վրայ աստղերը սկսեցին փայլել. Բագուի աղմկալից փողոցներում կառքերի, ծիաբարչների անց ու դարձը ականջ է խլացնում. մարդիկ անցնում են տենդային արագութեամբ, կարծես չարագործներ լինին, որոնց յետեւից ոստիկաններ են ընկել բոնելու։

Հայոց եկեղեցու հանդէպ դանուող հրապարակի լապտերները աղօտ, մեղմ լոյս են սփռում շրջակայթի վրայ, հեռւում լսւում է նաւի սուր սուլոցը և ամէն ինչ ցոյց է տալիս, որ նաւթային մայրաքաղաքի բնակիները դեռ չեն մտածում հանգստանալու, քնելու, թէն արդէն ժամը 10-ն է։ Փչում է «գելավար» խեղդող քամին, որից բնակիները կորչում են քափ քրտնքի մէջ. ամենը վազում են այն միակ տեղը—քաղաքային այգին, ուր կարելի է փոքր ինչ զով օդ շնչել։ «Անծուի այս տեսակ քաղաքը», լսւում են շարունակ խօսակցութեան ձայներ, «Եթէ այս փողն չը լինէր, ոչ ոք չէր ապրի այս դժոխքում. ախ մեր երկրի օդ, սառն ջուր, ուր էք»։

Քնած չէ այդ միջոցին և ապարանցի եղօն, Սարգըսի տղան։ Վարդապետի հրամանով ժամհարը նրան թոյլ տուեց գիշերը անցկացնել եկեղեցու բակում։ Պարզուելով զանգակատան լերկ սալայատակի վրայ, մօթալ փափախը գլխի տակին դրած բարձի տեղ և պատըռտուած չուխան վրան ձգած վերմակի տեղ, նա ակնապիշ նայում է աստղազարդ երկնքին. երբեմն-երբեմն, երեւի փալասի մէջ կապած թեւի ցաւից, նրա դէմքը կծկում է և նա «վայ նանի, վայ նանի» հառաջն է արձակում։ Փողոցի աղմուկը, դղրդող կառքերը, տաք և հեղձուցիչ «գելավար» քամու վզզոցը չեն հասնում նրա ականջին. նա, խլացած, ոչինչ չէ լսում. նոյն

իսկ ոչինչ չէ տեսնում. գործում է միայն նրա միտքը և գործում է արագութեամբ. ծանօթ պատկերներ մէկ մէկու յետեւից գալիս, սահում են նրա առաջից. թարմանում են յիշողութիւնները և նա, մոռանալով թեւի վէրքի կակիծը, ապրում է այդ յիշողութիւններով ու պատկերներով:

\* \* \*

Ահա իրանց գիւղը. գեռ երկու շաբաթ առաջ ինքն այստեղ էր. առաւօտը, լուսածագին, վեր էր կենում, գնում գէպի աղբիւրը, զով, սառն աղբիւրը, երեսը մի լաւ լուսնում, խաչակնքում, վերագառնում տուն. Շուշանն արդէն աղլուխի մէջ կապել է հացը և պանիրը՝ հանդը գնալու համար. փոքրիկ Մուկուչը գեռ բնած է՝ Ծերունի հայրը, Սարգիս ապէրը ժամից վերագառնում է. նա, սովորաբար, տիսուր է, երեսը կնճիռներով, խորշումներով ծածկուած. խորին թալսիծ նկարագրուած է այդ գէմքի վրայ.

—Ապէր, ասում է Եղօն, ախր փոխանակ այդպէս հալումաշ լինելու, աւելի լաւ չէ թոյլ տաս գնամ Բագու, համ Գրիգորին գտնեմ, համ բախտս փորձեմ. կարելի է Աստուած մեզ էլ ողորմի, մենք էլ մի կտոր հացի տիրանանք, աղքատութիւնից ազատուենք:

—Այ որդի, պատասխանում է շարունակ Սաքօն, փոքր եղբայրկ՝ Գրիգորը գնաց. ահա ութ ամիս ոչ մի լուր չը կայ. մեռաւ, սազ է, չը գիտենք. հիմա դու էլ գնաս, ում յոյսին ես թողնում ծերունի հօրդ, խեղճ կնոջդ և երեւխայիդ. ով պէտք է մեզ պահի և կերակրի, ով պէտք է աչքերս փակի, վերջին մի բուռ հողն ածի վրաս. չէ որդի, բախտը փորձելը լաւ չէ. Աստուած եթէ ուղենայ, եթէ վճռուած է, բախտը ինքն էր սորբով կը գայ քո գուան շէմքին կը չոփի. լաւ չէ Աստծուն փորձել. քո պապերի բոյնը, քո արտն ու արօտը մի թող. մի կտոր հաց Աստուած միշտ կը տայ. ծտերին, անտուններին կերակրողը մեղ էլ կը հասնի:

— Զէ ապէր, ինչ ուզում ես ասա, ես պէտք է գնամ. ընկերներս կիրակի օր ճանապարհ են ընկնում, ես էլ նրանց հետ. հէրիք է, ինչքան քափ քրտնքի մէջ աշխատեցինք, թող մի քիչ էլ մենք հարստանանք, ինչպէս շատերն ուրիշ տեղերից գնացել հարստացել են, մի քիչ էլ մենք հարստանանք. երկու երեք տարի կ'աշխատեմ թագւում, մի քիչ փող կը հաւաքեմ, կը վերադառնամ, պարտքերնիս կը տանք կ'աղատուենք մեր արինը ծծող պարտատէրից, և այն ժամանակ, մենք էլ բախտաւոր կը լինինք. ինչ ես զուր բախտիս առաջը կտրում:

Մերունին ուշադրութեամբ մտածեց աչքերը գետին յառած, ապա ասաց ախ քաշելով:

— Դէ դու գիտես, որդի, գնա, Աստուած քեզ հետ. գուցէ փոքր եղօրդէլ ճարես հետդ բերես, նշանածի աչքը ճանապարհին է:

\*

\*\*

Կիրակի է. գիւղը առանձին կենդանութիւն է ստացել. Եղօն և մի քանի իրան նման աղքատ երիտասարդներ պատրաստւում են ճանապարհ ընկնել դէպի Սւետեաց երկիրը, ոսկու հանքը: Եղօնց տանը մատաղ են արել. պատարագից յետոյ աէրտէրը և գիւղի համփաները հաւաքուեցին. մատաղը օրհնուեց, բաժանուեց. սուփրան դցուեց և տէրտէրն ու համփաները Սարօ ապօր հետ մի բանի բաժակ օղի և գինի խմեցին. «Բարով գնաս, շուտով գաս, որդի, ձեր օջախը վաս, շին պահես, լիանսաս, կշանաս և մեզ էլ լիացնես, կշացնես»: Եղօն ոտքի կանգնած ծառայում է և շնորհակալութիւն յայտնում: Նուշանը այս ու այն կողմն է վաղում հազիւ արտասուքը զսպելով: «Քեզ մատաղ, Եղօ, մեզ չը մոռանաս, Գրիգորին հետդ բերես. շուտ գաս, մեր արեւը չը խաւարեցնես»:

Եղօն այնքան յուզուած էր, որ լաւ չէ յիշում, ինչպէս տէրտէրը «Տէր ուղղեա զճանապարհս» կարդաց,

Սաքօ ապէլը համբուրեց ճակատը, ինչպէս ինքը հօր առաջ չոքեց, օրհնութիւնն առաւ, ինչպէս ամաշելով, կարմրելով նուշանին մնաս բարեւ ասաց, Մուկուշին համբուրեց և պաշարով լի խուրջինը ուսին գցելով՝ դուրս եկաւ գիւղից ու միացաւ ընկերներին:

Եղօն ուրախ է. ընկերների հետ «մուխամմազ» երգելով գնում է Դիլիջանի հրաշալի, զով անտառի միջով. չէ որ նրա փափագը կատարուեց, չէ որ, վերջապէս, նա գնում է բախտ օրոնելու. նա կատարելապէս հաւատացած է, որ այդ բախտը գտնելու է և գտնելու է Բագւում: «Ինչով եմ ես պակաս ուրիշներից, միթէ ես Աստծու ստեղծածը չեմ, միթէ ինձ պէս զօշաղ տղային Աստուած չի խղճար. Չէ, անպատճառ կը տար»: Միայն Եղօն չէ կարողանում երեւակայել, թէ ինչպէս է հարստանալու, ոսկիները ինչպէս են թափուելու գըլխին. նա լսել է, որ օսկին թափում է նաւթի ձեւով. յանկարծ, հողի տակից խփում է նաւթի շատրուան և մի քանի ժամուայ խփածը բաւական է մարդի հարըստացնելու համար: Ճիշտ է, այն հոգերը, ուր գտնում են ֆօնտանները, ձրի շեն. ամեն մարդ չունի, բայց այդ հոգ չէ: Եղօն հաւատացած է, որ կը գտնուին շատ բարի մարդիկ, որոնք իրանց ֆօնտանի երկու երեք ժամուայ խփածը կը բաշխեն իրան, ասելով, դէ, Եղօ, գնա բախտաւորուիր: Ի՞նչ բան է մի երկու ժամը նրա համար, որի ֆօնտանը ամբողջ օրերով խփում է. այդ անպատճառ կը լինի, և Եղօն, արդէն մտքում օրհնում է իր անյայտ բարերարին: Որպիսի եռանդով Եղօն աշխատելու է այդ բարերարի համար: Նա արդէն աղատուած է տեսնում իրան, հօրը, նուշանին գիւղական վաշխառու Մկրտումի ձեռքից. «Առ, ահա փողդ, այլ եւս մի ծծիր մեր արինը, շպրտում է նա չարշուն երկու հարիւրանց.—ըստ տուած երեսուն մանէթի տեղ ստացիր երկու հարիւր, յետ տուր մեր մուրհակը»: Ոհ, ինչպէս փայլում է նուշանի երեսն ուրախութիւնից:

Ահա և Աղստաֆայի կայարանը. Եղօն առաջին անգամն է տեսնում երկաթուղին. նա շացած է. լոկոմոտիվը նրան թւում է մի վիթխարի գազան. խուրջինը ուսին՝ նա պլացած նայում է, ընկերների օգնութեամբ մի կերպ տեղաւորւում է վագոնում և մինչեւ Բագու համալիք. համարեա տեղից չէ շարժւում ինչքան խելքին զու է տալիս, նա չէ կարողանում ըմբռնել, թէ ինչ ոյժ է, որ մղում է երկաթուղին այսպէս արագ վազելու. «Այստեղ սատանայի ձեռք կայ», վճռում է նա և աւելի կուշ է գալիս իր անկիւնում ու մի տեսակ թմրութեան մէջ ընկնում, մինչեւ որ ընկերներից մինը կողքին բթում է ու ասում. «Վեր կաց, խուրջինդ հաւաքիր, հասանք Բագու»:

Բագու անունից նա ցատկում է, իրրեւ էլեքտրական ցնցումից. չէ որ հասել էր իր փափագին, չէ որ հասել էր, վերջապէս, այն տեղը, ուր իր երազները պէտք է իրականանային, ուր հարստութիւն պէտք է ձեռք բերէր և գնար ազատելու իր հօրը, ընտանիքը չարչի Մկրտումի ճիրաններից, քաղցրացնելու իր Շուշանի գառն օրերը և պատճառելու նրան անբաւ ուրախութիւն. «Տէր Աստուած, դու յաջողիր գործո», խաչակնքեց Եղօն գուրս գալով վագոնից, խուրջինն ուսին, մօթալ փափախը գլխին և շուարած նայելով գէս ու դէն վազող ամբոխի վրայ:

«Ո՞ւր են վազում սրանք այսպէս լեղապատառ», մտածեց նա, և յանկարծ յիշեց. «ախր չէ որ ոսկի հաւաքելու են գնում. երեւի ամեն մարդ ուզում է ինքն առաջ ընկնի, ինքն առաջինը հաւաքի ոսկին»: Տէր Աստուած, թող աչքդ քաղցր լինի իմ վրայ, ինձ եւս արժանացրու այդ բախտին. ես եւս քո արարածն եմ»:

Այս մտածմունքից նրան հանեցին ընկերները և խորհուրդ տուին գնալ իրանց հետ Բալախանի, ուր նա կարող է և գործ գտնել, և եղբօրը տեսնել:

Բա ախանի նա, նոյն ընկերների օգնութեամբ, վարձուեց բանուոր Ն. պրօմիսլայի մէջ՝ Կառավարիչը

մի երիտասարդ, Փրանտ ձեւով հագնուած ինժեներ, տեսնելով նրան ասաց. «Ճօ, այս բռի արջին որտեղից էք բերել», Եղօն վիրաւորուեց, բայց նկատելով որ իր ընկերները ինժիների առաջ խոնարհ, գլուխը ծռած կանգնած են, կուլ տուեց վիրաւորանքը և լռեց. Նրան նշանակեցին օրական 60 կոպէկ վարձ և յանձնեցին վարպետներից մէկի հակողութեան. Այլ եւս նա իր ընկերներից և համագիւղացիներից ոչ ոքի չը տեսաւ. ամեն մարդ իր գործին, իր գլխի համար է մտածում, ով ժամանակ ունի յիշելու թէ ինչ եղաւ Եղօն, ինչ է անում: Եղօն չը կարողացաւ առաջին շաբաթը որեւ է տեղ գնալ. անծանօթ, առանց առաջնորդի, նա շըկը-լուած մնում էր ամեն անգամ, երբ կամենում էր գործարանից մի տեղ հեռանալ. ամեն տեղ վիշկաներ, մեքենաներ, հորեր, սեւ նաւթ, սեւ ցեխ. ցերեկները նրան սաստիկ աշխատեցնում էին առաւօտից մինչեւ երեկոյ. իսկ երեկոյեան նաւթի մէջ կորած, սեւացած, նա յոգնութիւնից տեղն ու տեղն քնում էր միւս մշակների հետ: Նա տանջուում էր մանաւանդ ծարաւութիւնից» որովհետեւ չէր կարողանում խմել թալախանի նաւթահամ ջուրը: Եւ նա չէր հասկանում, գլուխը կոտրում էր, բայց չէր հասկանում, թէ ինչպէս է հարըստանալու այդ նաւթի, ցեխի, կեղտի մէջ, ինչպէս է դիզելու ուկիներ: Ամբողջ մի շաբաթ եւս չը կարողացաւ որեւ է տեղեկութիւն ստանալ եղբօր մասին: Վերջպէս կիւրակի առաւօտ, իր համագիւղացիներից երկու հոգի եկան և նրան տարան իրանց հետ, ասելով. «Գնանք արակտիր, կարելի է եղբօրդ էլ այնտեղ տեսնես, բեզ էլ մի լաւ կընքենք այսօր, մարդ դառնաս, տեսնում ես բռի արջ են անուանում»:

\*  
\* \*

Եւ ինչ տեսաւ Եղօն. Նրանք մտան մի ստորեր-կրեայ պանդոկ, ոկզբում Եղօն ոչինչ չը նկատեց. ծխախոտի թանձր մուխը, բազմաթիւ մարդկանց շնչառու-

թիւնը առաջ էին բերել մի մշուշ, որի միջով շատ դը-  
ժուար էր տեսնել, զանազանել առարկաները և մարդ-  
կանց, սոսկալի ժխոր էր սիրում այդ պանդոկում: բա-  
ժակների ըըրիկոց, աղաղակներ, երգ, գոռոց գոչիւն,  
խոպոտ ձայներ, շիշերի բացուելու տրաքոց, հայհոյանը.  
— ամենը իրար խառնուելով մարդի ականջներն էին  
խլացնում: Եղօն նստեց իր ընկերների հետ մի սեղանի  
առաջ. ըիշ-ըիշ նրա աչքերը սովորեցին տեսնել իրերը և  
մարդկանց և այն ինչ-որ նա տեսաւ, նա երբէք չի  
մոռանայ: Նա տեսաւ ուսւ բանուորներ, նստած ուսւ  
աղջիկների հետ, օղի, գարեջուր էին խմում և երբեմ-  
երբեմն համբուրում, իրար հետ սիլի-բիլի անում:

Ամօթիած եղօն կարմրեց, ըռըշնեց. ընկերները ծի-  
ծաղում էին, տեսնելով նրա այդ վիճակը և սկսեցին  
փսիոալ. շուտով նրանց սեղանի վրայ ևս երեացին բա-  
ժակներ, գինի, գարեջուր: Նրան ստիպեցին խմել,  
բայց նրա կոկորդից ոչինչ ցած չէր իջնում: Նրա միտքը  
արագութեամբ գործում էր. նա չէր հասկանում ինչ-  
պէս տղամարդը, որ գլխին փափախ ունի դրած, կա-  
րող է հրապարակով, օտարների ներկայութեամբ, օր  
ցերեկով կնոջ համբուրել. «Երեի ոուսների աղաթն  
այդպէս է», մոռածեց նա: Բայց այս ինչ է տեսնում:  
Նոյնը անում են և հայերը, իր ապարանցի ընկերները.  
ըրտինքը կոխում է Եղօին յուզմունքից, իսկ ընկերները  
հոհուում են միայն, տեսնելով նրա վիճակը:

Եղօն յանկարծ ծլունկ եղաւ. նստած տեղից.  
կարծես նրան շիկացած երկաթով գիպան կամ օձ  
կծեց: Նրա չարաճճի ընկերները աչքով էին արել  
տրակտիրային աղջիկներից մէկին և սա մօտենալով,  
յանկարծ համբուրել էր նրան: Եղօն ամբողջ մարմնով  
դողում էր, կարմրատակել էր սաստիկ վիրաւորուած  
զգալով իր ամօթիսածութիւնը: Նա, զաւակի տէր, նա,  
որ գիշերները նոյն-իսկ փախենալով էր համբուրում  
Շուշանին, այժմ իր այտերի վրայ զգաց մի այլ կնոջ  
համբոյը: որ կարծես ալիեց, դաղեց նրան. բնագդմամբ,

նա ձեռքով սկսեց սրբել այդ այրուած տեղը, Տէր  
Աստուած, այս որտեղ է ընկել, այս ինչ աշխարհէ, մի-  
թէ այսպէս պէտք է փող աշխատել, հարամ լինի այս-  
պիսի փողը: Նա ըիչ էր մնում լաց լինի, նա զգում էր,  
որ պէտք է փախչել, հեռու փախչել այստեղից, և մուա-  
ծում էր այդպէս էլ անել, երբ, յանկարծ, մի այնպիսի  
նոր բան տեսաւ, որ տեղնուտեղն մեխուած մնաց, Այս ինչ  
է, միթէ նա է, Դրիգորնէ, իր հարազատ եղբայրը, այն  
ամօթխած ամաչկոտ, հեղ, վախկոտ Գրիգորը, Եթէ պան-  
դոկի տանիքը փուլ գար և գլխին թափուէր, Եղօն  
այնքան չէր զարմանայ, Դրիգորը նստած անկիւնի սեղանի  
մօտ, հարբած, համբուրում է մի կնոջ, թեղ ձգում է  
նրա պարանոցով, ինչ որ երգ է երգում խռպոտ ձայ-  
նով, նա կամենում է նորից համբուրել աղջկան, սա  
թոյլ չէ տալիս, ինչոր ասում է, Դրիգորը ձեռքը տա-  
նելով գրպանը, հանում է մի իւզոտած, կեղտոտ փող-  
աման և հանելով թղթագրամներ, առաջ Յանոց, յե-  
տոյ Յանոց, տալիս է նրան, Աղջիկը վերցնում է և  
թոյլ է տալիս համբուրուել իրան. Դրիգորը գարեջուր  
է պահանջում, նորից խռպոտ ձայնով երգում է, նորից  
կամենում համբուրուել աղջկան:

Եղօն ըիչ է մնում շնչասպառ լինի. նրա աչքերը  
մժնանում են, կարծէք մէկը նրա գլխին մի ահագին  
թոխմախով խփել է: Այնտեղ, գիւղում, հայրը, մայրը,  
ինքը, Շուշանն և Մուկուչը հալում, մաշում են վաշ-  
խառու Մկրտումի ձեռքին, պարտքերի մէջ խրուած.  
այնտեղ, գիւղում, խեղճ նշանածը անհամբեր սպասում  
է Դրիգորին, որ գայ փող բերի, պարտքերը տայ, պսա-  
կուի, իսկ նա, այստեղ, նա իր փողերը ծախսում է  
գինետնում, անառակ կանանց հետ:

Եղօն զարմանում է, որ պանդոկը փուլ չէ դալիս  
և իրանց ամենքին տակովը չէ անում: Զայրոյթը—կա-  
տաղութիւնը խեղդում են նրան, նա կամենում է հա-  
րայ տալ, պոռակը բայց կոկորդը չորացել է:

—Տօ, ի՞նչ ես աշքերդ չուել, նայում, կարծես մեզ

ամենքիս ուզում ես ուտել. ինչ կայ, —ուսին խփելով  
ասացին ընկերները, չը հասկանալով ինչ է կատար-  
ւում եղօի մէջ։

Եղօն միայն մատով ցոյց տուոց Գրիգորին և աղջը-  
կան։

—Հա, հա, հա, քրքռացին ընկերները. եղբայրդ.  
Էհ, ինչ անենք, ջահիլ է, զուարճանում է. սպասիր,  
սպասիր, թող անցնի մի երկու ամիս, դու նրանից  
վատթարը կ'անես. նստիր, նստիր, յիմար, խմիր գի-  
նին։

—Ես... պոռաց վերջապէս եղօն և խելագարի  
նման դուրս նետուեց պանդոկից, վախենալով որ չը  
լինի ինքն ևս եղբօր պէս դառնայ, մոռանայ հօրը,  
մօրը, Մուկուչին, Շուշանին և չարչի Մկրտումին։

Եւ նա քայլում է անծանօթ փողոցում շշկուած  
այժեամի պէս. նա փախչում է պանդոկից ինչպէս վա-  
րակիչ բոյնից, բայց եղբայրը... Գրիգորին, միաց ախր, բա  
ինքը ոչինչ չասի, բա թեկից չը բռնի, չը փորձի դուրս  
բաշել ցեխից։ Նա յետ է դառնում շտապ-շտապ, ներս  
է մտնում և առանց իր շուրջը նայելու ուղիղ գիմում  
է եղբօր վրայ և ձեռքն ուսին դնում։

—Գրիգոր, այ Գրիգոր, էս ինչ հողն ես տալի մեր  
դիմին։

Եղբայրը նայում է կարմրած աչքերով և կարծես  
չի հասկանում։

—Բա մեր տունը, մեր օջաղը, ախպէր, էդ ինչ  
օրի ես. բա բո նշանածը...»

Եղբայրը բարձրանում է օրօրուելով և ուզում է  
գրկել եղօին, բայց էլի ընկնում է կեղտոտ նստարանի  
վրայ։

—Գնանք, ախպէր, ասում է եղօն թել բռնելով և  
գէպի դուռը բաշ տալով. Գրիգորը թել դուրս է բա-  
շում, ձեռները տարածած գրկում է աղջկան... Եղօն  
գլուխը կախ դուրս է գնում, իսկ բազմութիւնը յե-  
տեկից հռհռում է։

Եղօն չը գիտէ, չէ յիշում ինչպէս նա կարողացաւ հասնել Բալախանի իրանց գործարանը. նա պառկեց ամբողջ օր, ամբողջ գիշեր նա շշմածի պէս էր. անկապ մտքերը վրդովում, խանդարում էին նրա ուղեղը. նա չը կարողացաւ մի բառէ քնել. Միայն լուսաբացին, վեր կացաւ, սառն ջրով երեսը լուաց, և ու մտքերով պաշարուած՝ գլուխը բաշ գնաց աշխատելու. նա մոռանալ չէր կարողանում եղբօրն ու պանդոկը. Մի հօրի գլխին կանգնած, նա սկսեց պտտեցնել մերենան և որովհետեւ խելքը գլխին չէր, ուշը ուրիշ տեղ էր, ոչ ոք էլ, ոչ գլխաւոր վարպետը, ոչ օգնականը իրան ոչինչ չէին հասկացրել, նա մերենան պտտեցնելիս, ձեռքը չը քաշեց ժամանակին և մերենան ջախջախեց նրա թեր:

Նա ընկաւ ուշաթափ և երբ ազքերը բացեց իրան գտաւ հիւանդանոցում. բժիշկը քննեց վերքը, ինչոր հեղուկով սրսկեց, լուաց, կապեց և ասաց, որ կարող է բժշկուել, բայց թել կարող է անպէտքանալ և թղթի վրայ ուռւսերէն մի բան գրելով տուեց նրան ու ճամբեց. «Էս էլ իմ բոռ բախտիցն է» մտածեց Եղօն ու լուռ մունջ գնաց գործարանը, թել կուպած. Նա ալժմ ուշը էր եկել և նրա համար ամին բան պարզ էր, վերքը նրան սթափեցրել էր: Նա եկաւ բախտը փորձելու և փորձեց. Աստուած չը կամեցաւ, որ նա հարստանայ. Դրա համար էլ նրա թել կոտրուեցաւ. զուր տեղն ինքը չը լսեց հօրը, թողեց իրանց արտերը, այդին, իրանց տունը: «Եւ ով գիտէ, միսիթարում էր նա իրան, այս Աստուծու կողմից մի ազդարարութիւն է. եթէ միամ այստեղ, գուցէ ես էլ եղբօրս նման մոռանամ ամեն բան, նամուս, խիթճ, հայր, մայր, կին, չէ փախչեմ, մի օր առաջ փախչեմ այստեղից, սա գըժոփիք է, այստեղ ես կ'այլուեմ, կը տոշորուեմ»: Բայց Դրիգորը. ինչ է լինելու ախրէ Համար, նա մեռել է իրանց համար, այդպէս էլ կ'ասի հօրը և մօրը:

Եղօն մտաւ կառավարիչ-ինժեների մօտ մնաս բարեւ անելու և ինդրելու, որ հացը հալալ անի: Մեծա-

հոգի կառավարիքը ոչ միայն հացը հալալ արեց, ոյլ և շորս ոռւբի էլ բաշխեց ճանապարհածախու։ «Ճիշտոր բռի արջ է, մտածել էր նա, կարող էր մեզանից բաւական փող պահանջել վտանգուած ձեռքի համար»։

—Ինչ լաւ մարդ է, մտածեց Եղօն և գլուխ տալով գուրս եկաւ, մէջքին ձգեց իր փոքրիկ պարկը ու դիմեց երկաթուղու կայարանը։ Այդտեղ նա իմացաւ, որ մինչեւ Աղստաֆայ տոմսակն արժէ վեց ոռւբի։ ինչ անի. երկու ոռւբի պակասում էր. ում դիմի։ Հայ մըշակները նրան խորհուրդ տուին գնալ հայոց եկեղեցին վարդապետի մօտ։ Եւ նա դիմեց վարապետին։

## II

Հաւերը կանչելիս Եղօն դեռ չէր քնած. լուսաբացին աչքերը ծանրացան, քոնը կոխեց և զարթնեց միայն այն ժամանակ, երբ ժամհարը կողքին բոթելով տաց. «Վեր կաց, հէրիք քնես, դնա մշակութեանդ յետից»։ Եղօն ոտքի կանգնեց, հագաւ չուխան, մօթալ փափախը դրեց դլխին, խաչակնքեց, համբուրեց եկեղեցու դուռը ու կանգնեց բակում։ Երկար նա սպասեց. արեն արդէն մի քանի կանգուն բարձրացել էր երկնքի վրայ, երբ, վերջապէս, մի քանի անգամ ժամհարին աղաշանք-պաղատանք անելուց յետոյ, նրան թոյլ տուին մտնել հայր սուրբի մօտ։ Մանելով, Եղօն մօթալ փափախը վերցրեց, մօտեցաւ, համբուրեց վարդապետի աջը և գլուխ առուեց երեք ուրիշ աղաների ևս, որոնք նստած էին նրա մօտ։

—Այս աղաներին, ասաց վարդապետը, նեղութիւն եմ տուել դան այստեղ քո գործի համար. որանցից երկուսը աղջոկատներ են, միւսը բժիշկ, Պատմիր, տեսնենք ինչ ես ուզում։

—Ծառայ եմ, ես ոչինչ չեմ ուզում. ինդըստ եմ ինձ երկու ոռւբի տաք, որ կարողանամ մեր գիւղը հասնել։

Վարդապետը աչքով արեց աղաներին. Նրանցից  
մինը, դիմեց Եղօին.

—Անունդ ի՞նչ է, որտեղացի ես:

—Ծառադ, Սարօյի Եղօն, ապարանցի է:

—Ի՞նչու էիր Եկել Բագու:

—Եկել էի բախտս փորձեմ, մի քանի շահու տիւ-  
րանամ, պարտըից ազատուեմ:

—Էհ, բախտդ փորձեցիր, որ հիմա կամենում ես  
վերադառնալ:

—Հրամանըս, փորձեցի. բախտս քու դուրս եկաւ:

—Ի՞նչպէս թէ քու դուրս եկաւ:

—Էհապէս. Աստուած չուզեց որ հարստանամ, տուեց  
թես ջարդեց. Հիմա պէտք է մեր տուն վերադառնամ.  
Երկու մանէթ պէտք է:

—Լսիր, Եղօ, վերկացաւ փաստաբանը և մօտենա-  
լով, կանգնեց նրա առաջ. լսիր. բախտդ, ընդհակա-  
ռակը, շատ լաւ բերել է. դու հիմա կարող ես հարըս-  
տանալ:

Եղօն զարմացած նայում էր փաստաբանին:

—Հասկանում ես, ի՞նչ եմ ասում. դու կարող ես  
հարստանալ:

—Ի՞նչպէս, աղա:

—Այ, այնպէս, որ դու գանդատ կը տաս զավոդի  
տիրոջից դատարանին և կը պահանջես երկու հազար  
ռուբլի. դատարանն էլ կը վճռի առնել նրանից այդ-  
փողը և տալ քեզ:

—Բայց ինչի՞ համար, ի՞նչ է արել ինձ զավոդի  
տէրը, որ նրանից գանգատ տամ:

—Ի՞նչ է արել. նա է մեղաւորը, որ թեդ կոտ-  
րուել է:

—Նա է մեղաւոր, բացականչեց Եղօն. չէ, աղա,  
հոգի ունեմ տալու Աստուծուն. նա սկի էլ մեղաւոր  
չէ. նա ինչ անի, խեղճը. ես նրա երեսն անգամ չեմ  
տեսել:

—Բաս ովկ է մեղաւոր, յիմար, զայրացած առաց  
փաստաբանը։

—Ո՞վ, իմ քոռ բախտը. Աստուած չուղեց, որ ես  
հարստանամ տուեց թես ջարդեց, եթէ ուզէր, թես  
սաղ կը մնար, ես էլ կ'աշխատէի, մի օր էլ գուցէ զա-  
վօդի տէրը խղճար ինձ, իր նաւթի հորի մի օրուայ  
խփածը տար ինձ։ Զէ, աղա, հոգի ունեմ տալու, զա-  
վօդի տէրը ոչ մի մեղք չունի. գեռ մարդն ինձ չորս  
ոռւբլի բաշխեց, Աստուած նրա երեխաներին պահի։

Վարդապետի, երկու փաստաբանների և բժշկի  
ջանքերը՝ համոզելու Եղօին, որ զավօդի տէրն է մե-  
ղաւոր, որովհետեւ նա չը պէտք է անփորձ, խամ մար-  
դին այնպէս վտանգաւոր գործ յանձնէր, պէտք է ցոյց  
տար մեքենան գործածելու եղանակը—ապարդիւն ան-  
ցան։ Եղօն չը կամեցաւ համոզուել, այլ շարունակ կըր-  
կընում էր.

—Ո՞չ, նա իսկի էլ մեղաւոր չէ. մեղաւորն իմ քոռ  
բախտն է։

Անձարացած, վարդապետը տուեց նրան հինգ  
րուբլի և Եղօն, խոր գլուխ տալով. մեկնեց. Ճանա-  
պարհին նա մի խանութից մի քիչ հաց ու պանիր գնեց,  
Դրեց խուրջինի մէջ, մի փոքրիկ էլ խաղալիք գնեց Մու-  
կուչի համար և գնաց կայարան։

Եղօն ազատ շունչ քաշեց երբ հասաւ Աղստաֆայ,  
իսկ երբ շնչեց Դիլիջանի անտառների օդը, խմեց աղ-  
բիւրների պաղ, բաղցր ջուրը, նա վերակենդանացաւ։

Նա քայլում էր ու մտածում իր կեանքի այդ վեր-  
ջին երկու շաբաթի մասին, եղբօր մասին, այն զար-  
հուրելի պանդոկի մասին։ Մի քանի օրից յետոյ նա  
գիւղ հասաւ։

—Եղօ, որդի, ի՞նչ շուտ, էս ի՞նչ օրում։

—Ապէր, բախտս փորձեցի և քոռ դուրս եկաւ.  
Ճեռքս էլ վրան դրի։

—Եղբայրդ...

—ել մի հարցրու, նա աննամուս է, նա մեռած  
է մեղ համար:

—Փառք քեզ Աստուած, միմնջաց ծերունին լացա-  
կամած, ըստ կամբն է,

—Փառք քեզ Աստուած, կրկնեց սրգին,  
Եւ վերստին սկսուեց գիւղական կեանքն իր արտ  
ու արօտով, իր վար ու ցանքով, իր հնազանդ ճակատա-  
գլուխ:

## ՇԱՀՐԻԱՐ

Եթե այս պատճեն պատճեն ունի պատճենական ին-  
չու և անհայտ անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-

գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-

գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-  
գրութեան անձնագրութեան անձնագրութեան անձնա-